ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022թվականի N 36

ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 Թ-Ի ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով, Լերմոնտովո համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Լերմոնտովո համայնքի ավագանու 2022 թ-ի նոյեմբերի 30-ի նիստի օրակարգը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԱԴՈՎ ՎԻՏԱԼԻ

ԽԱՌԱՏՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ԿՈՐՈԼՅՈՎ ԱՆԴՐԵՅ

ԿՈՐՈԼՅՈՎ ՎԱՍԻԼԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022թվականի N 37

ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով, Լերմոնտովո համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Լերմոնտովո համայնքի ամենամյա գույքագրման արդյունքները, որտեղ ավելցուկ և պակասորդ չի արձանագրվել:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԱԴՈՎ ՎԻՏԱԼԻ

ԽԱՌԱՏՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ԿՈՐՈԼՅՈՎ ԱՆԴՐԵՅ

ԿՈՐՈԼՅՈՎ ՎԱՍԻԼԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022թվականի N 38

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆԻ, ԵՎ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿՆԵՐԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավավելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ և 28-րդ կետերով և "Նորմատիվ իրավական ակտերի մասին" ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետով, Լերմոնտովո համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Լերմոնտովո համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքապետարանի աշխատակազմի, Մշակույթի կենտրոնի և մանկապարտեզի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն 1, 2 և 3 հավելվածների:

2.Ուժը կորցրած ճանաչել Լերմոնտովո համայնքի ավագանու 2022 թ-ի թիվ 17 որոշումը:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2023 թ-ի հունվարի 1-ից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԱԴՈՎ ՎԻՏԱԼԻ

ԽԱՌԱՏՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ԿՈՐՈԼՅՈՎ ԱՆԴՐԵՅ

ԿՈՐՈԼՅՈՎ ՎԱՍԻԼԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

Հավելված 1
ՀՀ Լոռու մարզի
Լերմոնտովո համայնքի ավագանու
2022թ. նոյեմբերի 30-ի N 38 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 10 :

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար)
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ			
1.	Համայնքի ղեկավար	1	250000
2.	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	192000
3.	Վարչական ղեկավար	1	130000
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ			
4	Աշխատակազմի քարտուղար	1	192000
5	Առաջատար մասնագետ-հաշվապահ	1	178000
6	Առաջատար մասնագետ	1	178000
7	Առաջին կարգի մասնագետ	1	115000
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ			
8	Հավաքարար	1	104000
9	Վարորդ	0,5	110000
10	Վարորդ-մեխանիզատոր	0,5	110000
ԸՆԴԱՄԵՆԸ		9	

Լերմոնտովո համայնքի ղեկավար՝ **Է. ՉԱԽԱԼՅԱՆ**

Հավելված 2
ՀՀ Լոռու մարզի
Լերմոնտովո համայնքի ավագանու
2022թ. նոյեմբերի 30-ի N 38 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՅԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 3 :

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար)
1.	Տնօրեն	1	120000
2.	Հաշվապահ	0,5	104000
3.	Գրադարանավար	0,5	104000
ԸՆԴԱՄԵՆԸ		2	

Լերմոնտովո համայնքի ղեկավար՝ **Է. ՉԱԽԱԼՅԱՆ**

Հավելված 3
ՀՀ Լոռու մարզի
Լերմոնտովո համայնքի ավագանու
2022թ. նոյեմբերի 30-ի N 38 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ "ՍԿԱՉԿԱ" ՆՈՒՀ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 9 :

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար)
1.	Տնօրեն	1	120000
2.	Դաստիրակ	1,12	104200
3.	Դաստիրակի օգնական	1	104200
4.	Խոհարար	1	104200
5.	Տնտեսվար	0,25	104200
6.	Հաշվապահ	0,5	104200
7.	Հավաքարար	0,5	104200
8.	Բուժքույր	0,5	104200
9.	Օգնական	0,25	104000
ԸՆԴԱՄԵՆԸ		6,12	

Լերմոնտովո համայնքի ղեկավար՝ **Է. ՉԱԽԱԼՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022թվականի N 39

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2023 Թ-Ի ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 19-րդ կետերով, "Տեղական տուրքերի և վճարների մասին" ՀՀ օրենքի 8-րդ, 9-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածներով և "Նորմատիվ իրավական ակտերի մասին" ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը, Լերմոնտովո համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Սահմանել ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովո համայնքում 2023 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԱԴՈՎ ՎԻՏԱԼԻ

ԽԱՌԱՏՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ԿՈՐՈԼՅՈՎ ԱՆԴՐԵՅ

ԿՈՐՈԼՅՈՎ ՎԱՍԻԼԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Լերմոնտովո համայնքի ավագանու
2022 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 39-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Ի.ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ **տասը հազար հինգ հարյուր դրամ**,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **քսանմեկ հազար դրամ**
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **երեսուն հինգ հազար դրամ**
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **երեսուն հինգ հազար դրամ**,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **յոթանասուն հազար դրամ**.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **երեք հազար դրամ**,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **հինգ հազար** դրամ

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ **երեք հազար դրամ**,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն

հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ **երեք հազար հինգ հարյուր դրամ.**

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **հարյուր քառասուն հազար դրամ.**

5) համայնքի վարչական տարածքում սեղմված բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **հարյուր քառասուն հազար դրամ.**

6) համայնքի վարչական տարածքում հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **հարյուր քառասուն հազար դրամ.**

7) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **հիսուն հազար դրամ.**

8) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **երեք հազար դրամ,**
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **երեք հազար վեց հարյուր դրամ**
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **չորս հազար հինգ հարյուր դրամ**
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **վեց հազար վեց հարյուր դրամ**
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **իններ հազար դրամ**
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար մեկ դրամից **տասներեք հազար հինգ հարյուր դրամ.**

բ. ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **երեք հազար դրամ,**
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **երեք հազար վեց հարյուր դրամ**
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **չորս հազար հինգ հարյուր դրամ**
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **վեց հազար դրամ**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **յոթ հազար հինգ հարյուր դրամ**

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **տասնըհինգ հազար դրամ.**

9) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ **երեք հարյուր հիսուն դրամ՝** մեկ քառակուսի մետրի համար.

10) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ **քսան հինգ հազար դրամ,**

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ **հիսուն հազար դրամ,**

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ **հարյուր հազար դրամ,**

դ. խաղատների համար՝ **երկու հարյուր հիսուն հազար դրամ,**

ե. շահումով խաղերի համար՝ **հարյուր քսանհինգ հազար դրամ,**

զ. վիճակախաղերի համար՝ **հիսուն հազար դրամ.**

11) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **մեկ հազար հինգ հարյուր դրամ**

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **երկու հազար հարյուր դրամ**

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **երեք հազար իննը հարյուր դրամ,**

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **հինգ հազար հարյուր դրամ,**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **յոթ հազար հինգ հարյուր դրամ**

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **տասներկու հազար դրամ.**

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **հինգ հարյուր դրամ,**

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **հազար դրամ,**

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **երկու հազար հինգ հարյուր դրամ,**

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **երկու հազար դրամ,**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **չորս հազար դրամ,**

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **հազար հինգ հարյուր դրամ.**

12) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու

հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **հազար դրամ**,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **հազար ութ հարյուր դրամ**,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ **հազար դրամ**,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

13) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **հիսուն հազար դրամ**.

14) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ **հինգ հազար դրամ**.

15) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **երկու հարյուր հիսուն հազար դրամ**

16) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար դրամ,**

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,**

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **երեք միլիոն հինգ հարյուր հազար դրամ**,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **հինգ միլիոն դրամ**

II.ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ,

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ երկու հազար դրամ,

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ տասը հազար դրամ,

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ երկու հազար դրամ,

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ,

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ երկու հազար դրամ,

7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը՝

ա.կենցաղային աղբի համար՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար վճար՝ ամսական հարյուր դրամ,

բ. ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ երկու հազար դրամ,

8) համայնքի կողմից իրավաբանական անձանց՝ ամսեկան աղբահանության վճար սահմանել՝ մեկ հազար դրամ:

9) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ **հինգ հարյուր դրամ** փոխհատուցման վճար:

10) համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի հասցեի տրամադրման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **մեկ հազար դրամ**:

11) համայնքային անասնաբույժի կողմից մատուցվող վճարովի անասնաբուժական ծառայությունների դիմաց տեղական վճարները

1.կենդանիների բուժման, կանխարգելման խորհրդատվություն՝ հինգ հարյուր դրամ;

2.ծննդօգնություն՝ թեթև՝ մեկ հազար դրամ, ծանր՝ հինգ հազար դրամ;

3.կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ՝ մանր՝ հարյուր դրամ,խոշոր՝ երկու հարյուր դրամ;

4.կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար՝ երկու հարյուր դրամ;

5.ախտահանություն՝ 1քմ երկու հարյուր դրամ

6.միջատազերծում՝ 1քմ հարյուր դրամ

7.կրծողների ոչնչացում՝ 1քմ երկու հարյուր դրամ

8.կենդանու հերձում՝ մարն մեկ հազար դրամ, խոշոր՝ երեք հազար դրամ;

9.Կենդանու բուժում՝ մեկ այցելությունը՝մեկ հազար դրամ:

Համայնքի ղեկավար՝ Է.Զախալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022թվականի N 40

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 500-ԻՑ ՊԱԿԱՍ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.2-րդ կետով, հաշվի առնելով Լերմոնտովո համայնքի ղեկավարի առաջարկությունը, Լերմոնտովո համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի կազմում ընդգրկված 500-ից պակաս հաշվառված բնակիչ ունեցող Անտառաշեն բնակավայրում ունենալ վարչական ղեկավար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԱԴՈՎ ՎԻՏԱԼԻ

ԽԱՌԱՏՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ԿՈՐՈԼՅՈՎ ԱՆԴՐԵՅ

ԿՈՐՈԼՅՈՎ ՎԱՍԻԼԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022թվականի N 41

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ կետերով, "Համայնքային ծառայության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով, 3-րդ մասի 3.1 կետով, 26-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Լերմոնտովո համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովոյի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների նկատմամբ հավելավճարի կիրառման կարգը և չափը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԱԴՈՎ ՎԻՏԱԼԻ

ԽԱՌԱՏՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ԿՈՐՈԼՅՈՎ ԱՆԴՐԵՅ

ԿՈՐՈԼՅՈՎ ՎԱՍԻԼԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի ավագանու
2022 թվականի նոյեմբերի 30-ի N 41 որոշման

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովոյի համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) համայնքային ծառայողների նկատմամբ հավելավճարների կիրառման հետ կապված իրավահարաբերությունները:

2. «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն համայնքային ծառայողի համար երաշխավորվում են՝ վարձատրություն, իր զբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճանի համար հավելավճար:

3. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, համայնքի ավագանու որոշմամբ հավելավճար կարող է սահմանվել նաև համայնքային ծառայության բնագավառում աշխատակազմի համայնքային ծառայողների՝ տվյալ աշխատակազմում ունեցած երկար տարիների (առնվազն հինգ տարի) աշխատանքային ստաժի համար:

2. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԸ

4. Աշխատակազմի համայնքային ծառայողների պաշտոնային դրույքաչափի նկատմամբ կիրառել հավելավճար՝ հետևյալ կարգով.

1) համայնքային ծառայության գլխավոր, առաջատար և կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող անձանց՝ համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու դեպքում, տրվում է հավելավճար՝ նրանց պաշտոնային դրույքաչափի հինգ տոկոսի չափով.

2) Համայնքային ծառայության բնագավառում երկար տարիների աշխատանքային ստաժի համար, համայնքային ծառայողների պաշտոնային դրույքաչափի նկատմամբ կիրառել հավելավճար՝ յուրաքանչյուր հինգ աշխատանքային տարվա համար նրանց պաշտոնային դրույքաչափի երեք տոկոսի չափով:

3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5. Աշխատակազմի համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունեցող համայնքային ծառայողների պաշտոնային դրույքաչափի նկատմամբ և համայնքային ծառայության բնագավառում երկար տարիների աշխատանքային ստաժի համար, համայնքային ծառայողների պաշտոնային դրույքաչափի նկատմամբ կիրառվող հավելավճարները՝ նման իրավունք ունեցող համայնքային ծառայողներին, տրամադրվում է միասին:

6. Սույն կարգի երկրորդ գլխով նախատեսված համայնքային ծառայողների պաշտոնային դրույքաչափի նկատմամբ կիրառվող հավելավճարների դեպքում, նրանց աշխատավարձը չի կարող գերազանցել իրենց զբաղեցրած համայնքային ծառայության պաշտոնների խմբից բարձ պաշտոնների խմբի համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնող համայնքային ծառայողների աշխատավարձի (պաշտոնային դրույքաչափի) իննսունհինգ տոկոսը:

7. Աշխատակազմի համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունեցող համայնքային ծառայողների պաշտոնային դրույքաչափի նկատմամբ կամ համայնքային ծառայության բնագավառում երկար տարիների աշխատանքային ստաժի համար, համայնքային ծառայողների պաշտոնային դրույքաչափի նկատմամբ հավելավճարները կիրառվում են նման իրավունք ձեռք բերելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

8. Սույն կարգով չկարգավորված հարաբերությունների դեպքում գործում են ՀՀ աշխատանքային, տեղական ինքնակառավարման մասին և համայնքային ծառայության մասին ՀՀ օրենսդրության նորմերը:

ԼԵՐՄՈՆՏՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է.ՉԱԽԱԼՅԱՆ**